# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար կահույքի պատրաստման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԿԾԿԾԻԳ-ԲՄԱՇՁԲ-25/29 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025 թվականի նոյեմբերի 20-ին կնքված N ԿԾԿԾԻԳ-ԲՄԱՇՁԲ-25/29 ծածկագրով պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2026 թվականի մայիսի 22-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** Պայմանագրի առավել արդյունավետ կատարումն ապահովելու նպատակով Պայմանագրով նախատեսված որոշ ապրանքատեսակների քանակությունների փոփոխություն-ավելացում:

**Փոփոխության նկարագրություն՝** Պայմանագրի շրջանակում կատարված փոփոխությունների արդյունքում.

- Պայմանագրի 4.1 կետը շարադրվել է նոր խմբագրությամբ հետևյալ կերպ. «4.1. Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 566,326,900.00 (հինգ հարյուր վաթսունվեց միլիոն երեք հարյուր քսանվեց հազար ինը հարյուր) ՀՀ դրամ (այսուհետ նաև՝ Պայմանագրի գին) ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարներ: Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:»:
- Պայմանագրի Հավելված N 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ով ներկայացվող աղյուսակի «ընդհանուր գինը/ՀՀ դրամ» դաշտի «558,569,600.00»-ը փոփոխվել է «566,326,900.00»-ով:
- Պայմանագրի Հավելված N 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ի Հավելված 1.1-ի «ՑԱՆԿ՝ անհրաժեշտ քանակների՝ ըստ յուրաքանչյուր մարզի»-ի աղյուսակում ավելացվել է երկու նոր դպրոց, իսկ առկա դպրոցներից մի քանիսում քանակներ և հաստատվել է նոր խմբագրությամբ համաձայն համաձայնագրի Հավելված 1-ի:
- Պայմանագրի Հավելված N 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ի Հավելված 1.2-ի «ՑԱՆԿ՝ մատակարարման հասցեների» աղյուսակում ավելացվել է երկու նոր մատակարարման հասցե և հաստատվել է նոր խմբագրությամբ համաձայն համաձայնագրի Հավելված 2-ի:
- Հաստատվել է Պայմանագրի վճարման ժամանակացույցը ըստ համաձայնագրի Հավելված 3-ի:

**Փոփոխության հիմնավորում՝** ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 2)-րդ և 3)-րդ ենթակետերով սահմանված պահանջների համաձայն, ինչպես նաև հիմք ընդունելով Պայմանագրի 7.5 կետը:

Պատվիրատու՝ **ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ**